



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՄՆՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ 20(384) «11» հոկտեմբերի 2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԸ	
433	«Փաստաբանության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ՀՕ-107-Ն օրենքը
434	«Պետական կենսաթոշակների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» ԱՀ ՀՕ-108-Ն օրենքը
ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	
435	«Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի ՆԿ-9-Ն կարգադրության մեջ լրացում կատարելու մասին» ԱՀ Նախագահի ՆԿ-8-Ն կարգադրությունը
ՅՈԹԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
436	«Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանը ձևավորելու և վարելու կարգը սահմանելու մասին» ԱՀ կառավարության N 797-Ն որոշումը
437	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 7-ի N130-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 800-Ն որոշումը
438	«Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում, Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N 1135-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ կառավարության N 806-Ն որոշումը
439	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 814-Ն որոշումը
440	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 815-Ն որոշումը
441	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 827-Ն որոշումը
442	«Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» ԱՀ կառավարության N 828-Ն որոշումը
443	«Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Ճանկա-

	թաղի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող որոշ տարածքների նկատմամբ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին» ԱՀ կառավարության N 829-Ն որոշումը	
444	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի մարտի 21-ի N 45 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 836-Ն որոշումը	
445	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N 663-Ն որոշման մեջ լրացում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 26-ի N 285-Ն որոշման մեջ լրացումներ և Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի N 143-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ԱՀ կառավարության N 837-Ն որոշումը	
446	«Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Կիչան համայնքի ղեկավարի լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու, Կիչան համայնքի ղեկավարի և Քաշաթաղի շրջանի Վան համայնքի ավագանու անդամների արտահերթ ընտրություններ նշանակելու, անցկացնելու և ընտրությունների նախապատրաստման ու անցկացման ծախսերը ֆինանսավորելու մասին» ԱՀ կառավարության N 843-Ն որոշումը	
ԻՆՆԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ		
447	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի N 53-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ԱՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 56-Ն որոշումը	
ՏԱՄՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ		
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ, ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ		
448	«Նոտարական գործավարության կարգը սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարի 2005 թվականի հոկտեմբերի 3-ի թիվ 198 հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ արդարադատության նախարարի N 119-Ն հրամանը	
449	««Լի-ֆարմա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը դեղատնային գործունեություն իրականացնելու լիցենզիա տալու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 246-Ա հրամանը	

450	«Անհատ ձեռնարկատեր Աննա Բաբուրյանին դեղատնային գործունեության համար տրված լիցենզիայի ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ առողջապահության նախարարի N 270-Ա հրամանը	
451	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2011 թվականի փետրվարի 24-ի N 10-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» ԱՀ գյուղատնտեսության նախարարի N 230-Ն հրամանը	
452	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման լիցենզիայի և լիցենզիայի ներդիրի գործողությունները դադարեցնելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 187 հրամանը	
453	«Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու և լիցենզիայի ներդիրի գործողությունը դադարեցնելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 195 հրամանը	
454	«Փոստային վճարման պետական նշանի նմուշները սահմանելու և գործողության մեջ դնելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 8-Ն հրամանը	
455	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության պետի 2009 թվականի ապրիլի 29-ի N 30Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 9-Ն հրամանը	

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2019 թվականի
սեպտեմբերի 26-ին

**«ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Փաստաբանության մասին» 2005 թվականի հոկտեմբերի 19-ի ՀՕ-223 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ, 22-րդ և 33-րդ հոդվածներում՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրություն» բառերը՝ համապատասխան հոլովածներով փոխարինել «Արցախի Հանրապետության Սահմանադրություն» բառերով՝ համապատասխան հոլովածներով:

Հոդված 2. Օրենքի 7-րդ հոդվածի վերնագրում և 1-ին մասում, 10-րդ հոդվածի 5-րդ մասի 8-րդ կետում, 12-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերում, 13-րդ հոդվածի 8-րդ մասի 13-րդ կետում, 42-րդ հոդվածի 3-րդ մասում, 46-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում, 48-րդ հոդվածի 4-րդ մասում՝ «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

Հոդված 3. Օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 8-րդ կետից հանել «և էկոնոմիկայի» բառերը:

Հոդված 4. Օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետում՝ «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն դատարանի սահմանադրական պալատում» բառերը փոխարինել «Գերագույն դատարանում» բառերով:

Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 2
Ստեփանակերտ
ՀՕ-107-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

Ընդունված է 2019 թվականի
սեպտեմբերի 26-ին

**«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» 2011 թվականի նոյեմբերի 30-ի ՀՕ-60-Ն օրենքի 55-րդ հոդվածի 3-րդ մասում «հաշմանդամության» բառից առաջ լրացնել «սույն օրենքի 15-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 2
Ստեփանակերտ
ՀՕ-108-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ՆԿ-9-Ն ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 38-րդ հոդվածը՝ **ո ր ո շ ու մ եմ**.

1. Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի հոկտեմբերի 13-ի «Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» ՆԿ-9-Ն կարգադրության հավելվածը լրացնել հետևյալ քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով՝

«Արցախի Հանրապետության Նախագահի աշխատակազմի քարտուղարության քաղաքացիների ընդունելության և նամակների բաժնի առաջին կարգի մասնագետի պաշտոնի անձնագիր N 59»:

2. Մույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման պահից:

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 8
Ստեփանակերտ
ՆԿ-8-Ն

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

25 սեպտեմբերի 2019թ.

N 797-Ն

ք. Ստեփանակերտ

ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՇՏԵՄԱՐԱՆԸ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՎԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ
ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 47-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Սահմանել պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանը վարելու կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարին՝ միջոցներ ձեռնարկել «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի հիման վրա ձևավորված անհատական (անձնավորված) հաշվառման տվյալների բազայի 2004-2013 թվականների տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում ներառելու և այդ ժամանակահատվածում վարձու աշխատողի համար պարտադիր սոցիալական ապահովագրության (ապահովության) վճարներ կատարած լինելու մասին տեղեկատվությունն ինքնաշխատեղանակով օգտագործելու նպատակով՝ ծրագրային ապահովում ստեղծելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԿԱՐԳ
ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՑՖԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՇՏԵՄԱՐԱՆԸ ՎԱՐԵԼՈՒ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑՑՆԵՐ

1. Մույն կարգով կարգավորվում են «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով (այսուհետ՝ օրենք) սահմանված՝ պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանը (այսուհետ՝ շտեմարան) վարելու հետ կապված հարաբերությունները:

2. Շտեմարանը վարելը ներառում է՝

1) կենսաթոշակ նշանակելու մասին դիմումի հիման վրա կամ սույն կարգով սահմանված դեպքերում կենսաթոշակի էլեկտրոնային գործ կազմելը:

2) կենսաթոշակ նշանակելուց հետո՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված՝ կենսաթոշակառուին վերաբերող տեղեկատվությունը շտեմարանում ներառելը (ըստ անհրաժեշտության՝ շտեմարանում ներառված տվյալներում փոփոխություններ կատարելը):

3) շտեմարանում ներառված՝ կենսաթոշակառուին վերաբերող տվյալների հիման վրա կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելը և վերականգնելը, կենսաթոշակ վճարելը դադարեցնելը և վերսկսելը:

3. Շտեմարանը վարում է Արցախի Հանրապետության աշխատանքի, սոցիալական հարցերի և վերաբնակեցման նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն):

2. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՑԻՆ ԳՈՐԾ ԿԱԶՄԵԼԸ

4. Կենսաթոշակի էլեկտրոնային գործը շտեմարանում ներառված՝ անձի կենսաթոշակային ապահովության իրավունքի իրականացումն ապահովող տեղեկատվության և Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի էլեկտրոնային պատճենների ամբողջություն է:

5. Կենսաթոշակի էլեկտրոնային գործը կազմվում է կենսաթոշակ նշանակելու մասին դիմումի հիման վրա՝ անձին կենսաթոշակ նշանակելու դեպքում:

6. Եթե անձին կենսաթոշակ է նշանակվել մինչև 2018 թվականի հունվարի 1-ը, ապա կենսաթոշակի էլեկտրոնային գործը կազմվում է նաև՝

1) դիմումի հիման վրա կենսաթոշակը վերահաշվարկելու, կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու, կենսաթոշակ վճարելը վերսկսելու, կենսաթոշակի տեսակը փոխելու դեպքում:

2) կենսաթոշակի գործը կենսաթոշակառուի հաշվառման նոր վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում տեղափոխելու կամ Արցախի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագրի (այսուհետ՝ համաձայնագիր) հիման վրա այլ պետություն ուղարկելու դեպքում:

3) կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելուց հետո կենսաթոշակի թղթային գործերը ոչնչացնելու դեպքում:

7. Կենսաթոշակի էլեկտրոնային գործ կազմելիս՝

1) փաստաթղթերի էլեկտրոնային պատճենները շտեմարան են մուտքագրվում՝ ա. սույն կարգի 5-րդ կետում նշված դեպքում՝ դիմումին կից ներկայացված փաստաթղթերի բնօրինակները տեսաներածելու (սկանավորելու) միջոցով,

բ. սույն կարգի 6-րդ կետի 1-2-րդ ենթակետերում նշված դեպքերում՝ դիմումին կից ներկայացված կամ կենսաթոշակի թղթային գործում առկա փաստաթղթերի բնօրինակները, իսկ բնօրինակների բացակայության դեպքում՝ փաստաթղթի «իսկականի հետ ճիշտ է» գրառումը պարունակող և կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կնիքով կնքված պատճենը տեսաներածելու միջոցով,

գ. սույն կարգի 6-րդ կետի 3-րդ ենթակետում նշված դեպքում՝ կենսաթոշակի թղթային գործում առկա փաստաթղթերի բնօրինակները, իսկ բնօրինակների բացակայության դեպքում՝ փաստաթղթի «իսկականի հետ ճիշտ է» գրառումը պարունակող և կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կնիքով կնքված պատճենը տեսաներածելու միջոցով.

2) ինքնաշխատ եղանակով շտեմարան են մուտքագրվում՝

ա. կենսաթոշակի իրավունք ունեցող անձի, իսկ անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող անձի դեպքում՝ նաև նրա օրինական ներկայացուցչի հանրային ծառայությունների համարանիշը կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանքի համարը, անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, սեռը, բնակության վայրի հասցեն՝ բնակչության պետական ռեգիստրի համակարգից,

բ. կենսաթոշակի իրավունք ունեցող անձի հաշմանդամության խումբը, աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության սահմանափակման աստիճանը, հաշմանդամ ճանաչելու օրը, ամիսը, տարեթիվը, հաշմանդամության ժամկետը և հերթական վերափորձաքննության ժամկետը՝ հաշմանդամների հաշվառման տեղեկատվական համակարգից,

գ. գործազրկության նպաստ ստանալու ժամանակահատվածը՝ գործազուրկների հաշվառման տեղեկատվական համակարգից.

3) շտեմարանում առկա տեղեկատվության հիման վրա ինքնաշխատ եղանակով ճշտվում են 2004-2013 թվականներն ընկած ժամանակահատվածում վարձու աշխատողի համար պարտադիր սոցիալական ապահովագրության (ապահովության) վճարներ կատարած լինելու մասին տեղեկատվությունը:

8. Սույն կարգի 7-րդ կետում նշված փաստաթղթերի էլեկտրոնային պատճենները պետք է տեսաներածված լինեն փիդիէֆ (PDF) ֆորմատի ֆայլերով, իսկ փաստաթղթերի բնօրինակները՝ գունավոր, առնվազն 300 ՀՏՎ (դիփիայ DPI) խտությամբ, այնպես, որպեսզի փաստաթղթի տեսաներածված պատճենի ֆայլը պարունակի փաստաթուղթն ամբողջությամբ (մեկ փաստաթուղթը, անկախ էջերի թվից, տեսաներածվում է որպես առանձին ֆայլ):

**3. ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՆՇԱՆԱԿԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՍՍՍՑՎԱԾ՝
ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏԵՂԵԿՍՏՎՈՒԹՅՈՒՆԸ
ՇՏԵՄԱՐԱՆՈՒՄ ՆԵՐԱՌԵԼԸ**

9. Կենսաթոշակ նշանակելուց հետո՝ Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված՝ կենսաթոշակառուին վերաբերող տեղեկատվությունը շտեմարանում ներառվում է՝

1) կենսաթոշակառուի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից ներկայացված դիմումի (այսուհետ՝ դիմում) հիման վրա.

2) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընդունված վարչական ակտի (այսուհետ՝ վարչական ակտ) հիման վրա.

3) ինքնաշխատ եղանակով:

10. Կենսաթոշակառուին վերաբերող տեղեկատվությունը դիմումի, վարչական ակտի հիման վրա և ինքնաշխատ եղանակով շտեմարանում ներառելու ընթացակարգը սահմանում է նախարարության սոցիալական ապահովության պետական գործակալությունը (այսուհետ՝ գործակալություն):

11. Սույն կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետում նշված դիմումի հիման վրա կենսաթոշակառուին վերաբերող տեղեկատվությունը շտեմարան ներառվելու դեպքում՝

1) դիմումին կից ներկայացված փաստաթղթերի բնօրինակները, էլեկտրոնային պատճենները կենսաթոշակի էլեկտրոնային գործ կազմելու համար սահմանված կանոններով տեսաներածելու միջոցով կցվում են կենսաթոշակի էլեկտրոնային գործին.

2) շտեմարանում արձանագրվում են տվյալները մուտքագրող մասնագետի «օգտվողի անունը», տվյալները մուտքագրելու ժամը, օրը, ամիսը, տարեթիվը:

12. Սույն կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետում նշված դիմումի հիման վրա կենսաթոշակառուին վերաբերող տեղեկատվությունը շտեմարանում ներառվելու դեպքում տեղեկատվությունը համադրվում է գործակալության տնօրինության տակ գտնվող (Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական կառավարման այլ մարմիններից ինքնաշխատ եղանակով ստացված) տվյալների հետ: Ընդ որում, անճշտությունների (անհամապատասխանությունների) առկայության դեպքում՝

1) հիմք է ընդունվում (շտեմարան է մուտքագրվում) դիմումի և կից փաստաթղթերի հիման վրա ներկայացված տեղեկատվությունը.

2) գործակալությունը, տեղեկատվության հավաստիության համար պատասխանատու պետական կառավարման մարմնի հետ համատեղ, փոխհամաձայնեցված կարգով, միջոցներ է ձեռնարկում անճշտությունները (անհամապատասխանությունները) շտկելու ուղղությամբ:

13. Վարչական ակտի հիման վրա կենսաթոշակառուին վերաբերող տեղեկատվությունը շտեմարանում ներառվելու դեպքում վարչական ակտի բնօրինակը, էլեկտրոնային պատճենը տեսաներածելու միջոցով կցվում է կենսաթոշակի էլեկտրոնային գործին, իսկ շտեմարանում արձանագրվում են վարչական ակտի համարը, օրը, ամիսը, տարեթիվը, վարչական ակտը մուտքագրող մասնագետի «օգտվողի անունը», տվյալները մուտքագրելու ժամը, օրը, ամիսը, տարեթիվը: Տեսաներածումը կատարվում է կենսաթոշակի էլեկտրոնային գործ կազմելու համար սահմանված կանոններով:

14. Վարչական ակտի հիման վրա շտեմարանում ներառվում է հետևյալ տեղեկատվությունը (եթե դիմումի հիման վրա այդ տեղեկատվությունը չի մուտքագրվել շտեմարան)

1) Արցախի Հանրապետության արդարադատության նախարարությունից ստացված՝ կենսաթոշակառուի, անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուին նշանակված կենսաթոշակն ստանալու իրավունք ունեցող անձի մահվան օրը, ամիսը, տարեթիվը.

2) Արցախի Հանրապետության ոստիկանությունից ստացված՝

ա. կենսաթոշակառուի, անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուին նշանակված կենսաթոշակն ստանալու իրավունք ունեցող անձի՝ Արցախի Հանրապետության քաղաքացիությունը դադարելու օրը, ամիսը, տարեթիվը,

բ. կենսաթոշակառուի, անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուին նշանակված կենսաթոշակն ստանալու իրավունք ունեցող անձի՝ Արցախի Հանրապետության քաղաքացու անձնագիրն անվավեր ճանաչելու օրը, ամիսը, տարեթիվը,

գ. օտարերկրյա քաղաքացի կենսաթոշակառուի՝ օտարերկրյա պետությունում իր բնակության վայրի հասցեով հաշվառվելու օրը, ամիսը, տարեթիվը, ինչպես նաև Արցախի Հանրապետությունում բնակության վայրի (հասցեի) հաշվառումից դուրս գալու օրը, ամիսը, տարեթիվը,

դ. օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 5-5.1-ին կետերի հիման վրա կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերած կենսաթոշակառուի կամ նույն կետերով սահմանված՝ 14 տարին չլրացած երեխայի, եղբոր, քրոջ կամ թոռան հաշվառման

հասցեն փոխվելու (կենսաթոշակառուի՝ մահացած կերակրողի 14 տարին չըրացած երեխայի, եղբոր, քրոջ կամ թոռան հետ նույն բնակության վայրում հաշվառված լինելը դադարելու) օրը, ամիսը, տարեթիվը.

3) Արցախի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած (այսուհետ՝ համաձայնագրի մասնակից պետություն) իրավասու մարմնից ստացված՝ կենսաթոշակառուին այդ պետությունում կենսաթոշակ նշանակելու օրը, ամիսը, տարեթիվը.

4) օտարերկրյա պետության իրավասու մարմնից ստացված՝ օտարերկրյա քաղաքացիություն ունեցող կենսաթոշակառուին այլ պետությունում կենսաթոշակ նշանակելու օրը, ամիսը, տարեթիվը.

5) բժշկասոցիալական փորձաքննության մարմնի՝ հաշմանդամների հաշվառման տեղեկատվական համակարգից ստացված՝

ա. կենսաթոշակառուին փորձաքննության (վերափորձաքննության) ենթարկելու և հաշմանդամ ճանաչելու դեպքում՝ հաշմանդամ ճանաչելու օրը, ամիսը, տարեթիվը, հաշմանդամության խումբը, աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության սահմանափակման աստիճանը, հաշմանդամության ժամկետը և հերթական վերափորձաքննության ժամկետը,

բ. կենսաթոշակառուին հաշմանդամ ճանաչելու մասին վարչական ակտը դադարելու օրը, ամիսը, տարեթիվը, կամ, մինչև հերթական վերափորձաքննության ժամկետը լրանալը, վերափորձաքննության ենթարկելու և հաշմանդամ չճանաչելու դեպքում՝ վերափորձաքննության օրը, ամիսը, տարեթիվը,

գ. օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերած կենսաթոշակառուին վերափորձաքննության ենթարկելու և վերափորձաքննության արդյունքում աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում չսահմանելու դեպքում՝ վերափորձաքննության օրը, ամիսը, տարեթիվը,

դ. օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերած կենսաթոշակառուի ծնողներին վերափորձաքննության ենթարկելու և աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակմամբ հաշմանդամ ճանաչելու դեպքում՝ վերափորձաքննության օրը, ամիսը, տարեթիվը, հաշմանդամության խումբը, աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության սահմանափակման աստիճանը, հաշմանդամության ժամկետը և հերթական վերափորձաքննության ժամկետը,

ե. կենսաթոշակառուի ծնողներին հաշմանդամ ճանաչելու մասին վարչական ակտը դադարելու օրը, ամիսը, տարեթիվը,

զ. կենսաթոշակառուի ծնողներին, մինչև հերթական վերափորձաքննության ժամկետը լրանալը, վերափորձաքննության ենթարկելու և վերափորձաքննության արդյունքում հաշմանդամ չճանաչելու դեպքում՝ վերափորձաքննության օրը, ամիսը, տարեթիվը,

է. օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիման վրա՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերած կենսաթոշակառուի ծնողներին մինչև հերթական վերափորձաքննության ժամկետը լրանալը, վերափորձաքննության ենթարկելու և վերափորձաքննության արդյունքում աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում չսահմանելու դեպքում՝ վերափորձաքննության օրը, ամիսը, տարեթիվը.

6) բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունից ստացված՝ բնակչության սոցիալական պաշտպանության պետական կազմակերպություն ընդունվելու (կազմակերպությունից դուրս գալու) օրը, ամիսը, տարեթիվը.

7) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված՝ կենսաթոշակառուի աշխատանքի ընդունվելու կամ անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրը, ամիսը, տարեթիվը (եթե կենսաթոշակը նշանակվել է չաշխատելու պայմանի առկայությամբ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-5.1-ին կետերի, կամ պետական կամ համայնքային պաշտոն զբաղեցրած անձի աշխատանքի ընդունվելու (պետական և համայնքային պաշտոն զբաղեցնելու) օրը, ամիսը, տարեթիվը, «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա)։

8) Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված՝ զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուի՝ զինվորական ծառայության անցնելու, դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի, քննչական կոմիտեի ծառայողի կամ դատավորի պաշտոնի նշանակվելու օրը, ամիսը, տարեթիվը։

9) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 28-ի N 906-Ն որոշմամբ սահմանված կարգով բանկերից ստացված՝ կենսաթոշակն անկանխիկ եղանակով ստացող կենսաթոշակառուի՝ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով բանկ ներկայանալու օրը, ամիսը, տարեթիվը։

15. Ինքնաշխատ եղանակով շտեմարանում ներառվում է հետևյալ տեղեկատվությունը

1) Արցախի Հանրապետության ոստիկանությունից ստացված՝

ա. կենսաթոշակառուի, իսկ անչափահաս կամ ինսամակալության տակ գտնվող կենսաթոշակառուի դեպքում՝ նաև նրա օրինական ներկայացուցչի անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի տեսակը, սերիան և համարը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը փոխվելու մասին տեղեկատվությունը (նոր տվյալը),

բ. 16 տարին չլրացած կենսաթոշակառուին Արցախի Հանրապետության քաղաքացու անձնագիր հատկացնելու դեպքում՝ անձնագրի սերիան և համարը։

2) Արցախի Հանրապետության արդարադատության նախարարությունից ստացված՝ 16 տարին չլրացած կենսաթոշակառուի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան վկայականի սերիան և համարը, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը փոխվելու մասին տեղեկատվությունը (նոր տվյալը)։

3) հարկային մարմնից ստացված՝ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տվյալները։

16. Կենսաթոշակառուի՝ սոցիալական պաշտպանության պետական կազմակերպություն ընդունվելու օրը, ամիսը, տարեթիվը շտեմարան մուտքագրվելու դեպքում ինքնաշխատ եղանակով հաշվարկվում է սոցիալական պաշտպանության պետական կազմակերպություն ընդունվելուն հաջորդող ամսվա 1-ից կենսաթոշակառուին վճարման ենթակա գումարը՝

1) եթե կենսաթոշակառուն ստանում է զինվորական կենսաթոշակ՝ հաշվարկված զինվորական կենսաթոշակի 50 տոկոսը։

2) եթե կենսաթոշակառուն ստանում է աշխատանքային կենսաթոշակ՝ հաշվարկված կենսաթոշակի աշխատանքային մասը։

17. Կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անչափահաս կենսաթոշակառուի՝ երեխաների խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություն ընդունվելու օրը, ամիսը, տարեթիվը շտեմարան մուտքագրվելու դեպքում՝ ընդունվելուն հաջորդող ամսվա 1-ից կենսաթոշակի վճարման ցուցակով կենսաթոշակի գումար չի վճարվում։ Սույն կետով սահմանված դեպքում, ընդունվելուն հաջորդող ամսվա 1-ից, շտեմարանում կենսաթոշակառուի անվամբ հաշվեգրվում է (կուտակվում է) հաշվարկված՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի գումարի 50 տոկոսը։

18. Կենսաթոշակատուի՝ սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունից դուրս գալու օրը, ամիսը, տարեթիվը շտեմարան մուտքագրվելու դեպքում ինքնաշխատ եղանակով վերահաշվարկվում է սոցիալական պաշտպանության պետական կազմակերպությունից դուրս գալուն հաջորդող ամսվա 1-ից կենսաթոշակատուին վճարման ենթակա գումարը՝ հաշվարկված կենսաթոշակի չափով:

**4. ՇՏԵՄԱՐԱՆՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ՝ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԻՄՆԱՆ ՎՐԱ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌԱԳՆԵԼԸ, ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՎՃԱՐԵԼԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼԸ ԿԱՄ ՎԵՐՍԿՄԵԼԸ**

19. Կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում և վերականգնվում է, կենսաթոշակ վճարելը դադարեցվում և վերսկսվում է օրենքի 41-րդ հոդվածով սահմանված կարգով:

20. Կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է, և կենսաթոշակ վճարելը վերսկսվում է, եթե կենսաթոշակատուն, ըստ բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված է Արցախի Հանրապետությունում բնակության վայրի հասցեում:

21. Կենսաթոշակ ստանալու իրավունքն ինքնաշխատ եղանակով դադարեցվում է, եթե սույն կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետում նշված դիմումի կամ վարչական ակտի հիման վրա շտեմարան են մուտքագրվել՝

1) կենսաթոշակատուի մահվան, մահացած կամ անհայտ բացակայող ճանաչելու օրը, ամիսը, տարեթիվը.

2) կենսաթոշակատուի՝ Արցախի Հանրապետության քաղաքացիությունը դադարելու օրը, ամիսը, տարեթիվը.

3) կենսաթոշակատուի՝ Արցախի Հանրապետության քաղաքացու անձնագիրն անվավեր ճանաչելու օրը, ամիսը, տարեթիվը.

4) օտարերկրյա քաղաքացի կենսաթոշակատուի՝ օտարերկրյա պետությունում իր բնակության վայրի հասցեով հաշվառվելու օրը, ամիսը, տարեթիվը, ինչպես նաև Արցախի Հանրապետությունում բնակության վայրի (հասցեի) հաշվառումից դուրս գալու օրը, ամիսը, տարեթիվը.

5) օտարերկրյա քաղաքացիություն ունեցող կենսաթոշակատուի կացության կարգավիճակն անվավեր ճանաչելու օրը, ամիսը, տարեթիվը.

6) համաձայնագրի մասնակից պետության իրավասու մարմնից ստացված՝ կենսաթոշակատուին այդ պետությունում կենսաթոշակ նշանակելու օրը, ամիսը, տարեթիվը.

7) օտարերկրյա քաղաքացիություն ունեցող կենսաթոշակատուին այլ պետությունում կենսաթոշակ նշանակելու օրը, ամիսը, տարեթիվը.

8) հաշմանդամության կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակատուին կամ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերի հիման վրա՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերած կենսաթոշակատուի ծնողներին, ամուսնուն հաշմանդամ ճանաչելու մասին վարչական ակտը դադարելու օրը, ամիսը, տարեթիվը կամ, մինչև հերթական վերափորձաքննության ժամկետը լրանալը, վերափորձաքննության ենթարկելու և վերափորձաքննության արդյունքում հաշմանդամ չճանաչելու կամ աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում չսահմանվելու դեպքում՝ վերափորձաքննության օրը, ամիսը, տարեթիվը.

9) օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերած կենսաթոշակատուին հաշմանդամ ճանաչելու մասին վարչական ակտը դադարելու օրը, ամիսը, տարեթիվը կամ, մինչև հերթական վերափորձաքննության ժամկետը լրանալը, վերափորձաքննության ենթարկելու և վերափորձաքննության արդյունքում հաշմանդամ չճանաչելու կամ աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում չսահմանվելու դեպքում՝ վերափորձաքննության օրը, ամիսը, տարեթիվը.

10) օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 5-5.1-ին կետերի հիման վրա՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերած կենսաթոշակատուի կամ նույն կետով սահմանված՝ 14 տարին չլրացած երեխայի, եղբոր, քրոջ կամ թոռան հաշվառման հասցեն փոխվելու (կենսաթոշակատուի՝ մահացած կերակրողի 14 տարին չլրացած երեխայի, եղբոր, քրոջ կամ թոռան հետ նույն բնակության վայրում հաշվառված լինելը դադարելու) օրը, ամիսը, տարեթիվը.

11) սոցիալական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձի՝ սոցիալական պաշտպանության պետական կազմակերպություն ընդունվելու օրը, ամիսը, տարեթիվը.

12) կենսաթոշակատուի աշխատանքի ընդունվելու, (զինվորական ծառայության) անցնելու կամ անհատ ձեռնարկատեր հաշվառվելու օրը, ամիսը, տարեթիվը, եթե կենսաթոշակը նշանակվել է չաշխատելու պայմանի առկայությամբ՝ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-5.1-ին կետերի, կամ պետական կամ համայնքային պաշտոն զբաղեցրած անձի աշխատանքի ընդունվելու (պետական և համայնքային պաշտոն զբաղեցնելու) օրը, ամիսը, տարեթիվը «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի հիման վրա.

13) զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակատուի՝ զինվորական ծառայության անցնելու, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի, քննչական կոմիտեի ծառայողի կամ դատավորի պաշտոնի նշանակվելու օրը, ամիսը, տարեթիվը:

22. Կենսաթոշակ ստանալու իրավունքն ինքնաշխատ եղանակով դադարեցվում է նաև հետևյալ դեպքերում՝

1) լրացել է հաշմանդամության կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակատուի հաշմանդամության ժամկետը.

2) կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ է նշանակվել մահացած կերակրողի 18 տարին չլրացած երեխային (եղբորը, քրոջը, թոռանը), և լրացել է նրա 18 տարին.

3) կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ է նշանակվել մահացած կերակրողի 18 տարին չլրացած եղբորը, քրոջը, թոռանը, և լրացել է նրանց ծնողների հաշմանդամության ժամկետը.

4) կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ է նշանակվել մահացած կերակրողի ցերեկային ուսուցմամբ սովորող զավակին (եղբորը, քրոջը, թոռանը), և լրացել է նրա 23 տարին.

5) կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ է նշանակվել մահացած կերակրողի 18 տարին լրացած հաշմանդամ զավակին, և լրացել է նրա հաշմանդամության ժամկետը.

6) կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ է նշանակվել մահացած կերակրողի հաշմանդամ ճանաչված ծնողներին, ամուսնուն և լրացել է կենսաթոշակատուի հաշմանդամության ժամկետը.

7) կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ է նշանակվել մահացած (զոհված) կերակրողի 14 տարին չլրացած (կենսաթոշակի իրավունք ունեցող) երեխայի, եղբոր, քրոջ կամ թոռան խնամքով զբաղված անձին, և լրացել է մահացած (զոհված) կերակրողի երեխայի, եղբոր, քրոջ կամ թոռան 14 տարին.

8) լրացել է կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ Արցախի Հանրապետությունում բնակվելու իրավունքի ժամկետը.

9) սոցիալական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձին 12 ամիս անընդմեջ չի վճարվել կենսաթոշակ, բացառությամբ այն դեպքի, երբ կենսաթոշակ վճարելը դադարեցվել է անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակատուին նշանակված կենսաթոշակն ստանալու իրավունք ունեցող անձի մահվան, Արցախի Հանրապետության քաղաքացու անձնագիրն անվավեր ճանաչելու

կամ Արցախի Հանրապետությունում բնակվելու իրավունքի ժամկետը լրանալու պատճառով:

23. Մահացած կերակրողի՝ ցերեկային ուսուցմամբ սովորող զավակին (եղբորը, քրոջը, թոռանը) նշանակված կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքն ինքնաշխատ եղանակով դադարեցվում է յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ից:

24. Կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելիս՝ շտեմարանում ինքնաշխատ եղանակով արձանագրվում են կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու օրը, ամիսը, տարեթիվը և կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու պատճառը՝ ըստ գործակալության սահմանած դասակարգման:

25. Կենսաթոշակը վճարելն ինքնաշխատ եղանակով դադարեցվում է՝

1) կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարելու դեպքում.

2) անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուին նշանակված կենսաթոշակն ստանալու իրավունք ունեցող անձի՝ մահվան օրը, ամիսը, տարեթիվը կամ Արցախի Հանրապետության քաղաքացու անձնագիրն անվավեր ճանաչելու օրը, ամիսը, տարեթիվը՝ դիմումի կամ վարչական ակտի հիման վրա շտեմարան մուտքագրվելու դեպքում.

3) անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակառուին նշանակված կենսաթոշակն ստանալու իրավունք ունեցող օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ Արցախի Հանրապետությունում բնակվելու իրավունքի ժամկետը լրանալու դեպքում.

4) կենսաթոշակառուին (կամ նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձին) 12 ամիս անընդմեջ կենսաթոշակ չվճարելու դեպքում.

5) օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով հայտարարությունն չտալու (բանկ չայցելելու) դեպքում:

26. Կենսաթոշակ վճարելը դադարեցնելիս՝ շտեմարանում ինքնաշխատ եղանակով արձանագրվում են կենսաթոշակ վճարելը դադարեցնելու օրը, ամիսը, տարեթիվը և կենսաթոշակ վճարելը դադարեցնելու պատճառը՝ ըստ գործակալության սահմանած դասակարգման:

27. Կենսաթոշակ ստանալու իրավունքն ինքնաշխատ եղանակով վերականգնվում է, եթե՝

1) կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվել է հաշմանդամության ժամկետը լրանալու պատճառով, և վարչական ակտի հիման վրա շտեմարան են մուտքագրվել հաշմանդամների հաշվառման տեղեկատվական համակարգից կամ բժշկատոցիալական փորձաքննության մարմնից ստացված՝

ա. հաշմանդամության կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուի հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ տասներկու ամսվա ընթացքում կրկին հաշմանդամ ճանաչվելու օրը, ամիսը, տարեթիվը,

բ. մահացած կերակրողի՝ 18 տարին չլրացած (կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող) եղբոր, քրոջ, թոռան՝ ծնողների հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ տասներկու ամսվա ընթացքում կրկին աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվելու օրը, ամիսը, տարեթիվը,

գ. մահացած կերակրողի՝ 18 տարին լրացած հաշմանդամ զավակի հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո տասներկու ամսվա ընթացքում կրկին աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվելու օրը, ամիսը, տարեթիվը,

դ. կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստացող՝ մահացած կերակրողի հաշմանդամ ճանաչված ծնողների, ամուսնու հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ 12 ամսվա ընթացքում կրկին հաշմանդամ ճանաչվելու օրը, ամիսը, տարեթիվը.

2) սույն կարգի 9-րդ կետի 1-ին ենթակետում նշված դիմումի հիման վրա շտեմարան են մուտքագրվել

ա. կենսաթոշակատուին մահացած կամ անհայտ բացակայող ճանաչելու մասին դատարանի վճիռը վերացնելու վերաբերյալ դատարանի վճիռն ուժի մեջ մտնելու օրը, ամիսը, տարեթիվը,

բ. օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերած անձի՝ աշխատանքից ազատվելու կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունը դադարեցնելու պետական հաշվառման օրը, ամիսը, տարեթիվը (եթե կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվել է աշխատանքի ընդունվելու կամ անհատ ձեռնարկատեր հաշվառվելու պատճառով), կամ «Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա պետական կամ համայնքային պաշտոն զբաղեցրած անձի աշխատանքից ազատվելու (պետական և համայնքային պաշտոն չզբաղեցնելու) օրը, ամիսը, տարեթիվը,

գ. զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող անձի՝ զինվորական ծառայությունից արձակվելու, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի, քննչական կոմիտեի ծառայողի կամ դատավորի պաշտոնից ազատվելու օրը, ամիսը, տարեթիվը (եթե կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվել է զինվորական ծառայության անցնելու, ինչպես նաև դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի, քննչական կոմիտեի ծառայողի կամ դատավորի պաշտոնի նշանակվելու պատճառով),

դ. օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող կենսաթոշակատուի՝ Արցախի Հանրապետությունում բնակվելու իրավունքի ժամկետը լրանալուց հետո, 3 ամսվա ընթացքում, կրկին բնակվելու իրավունք ձեռք բերելու օրը, ամիսը, տարեթիվը (եթե կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվել է օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ Արցախի Հանրապետությունում բնակվելու իրավունքի ժամկետը լրանալու պատճառով)։

3) լրացել է օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերած անձի տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը (եթե կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվել է աշխատանքի անցնելու կամ անհատ ձեռնարկատեր գրանցվելու պատճառով)։

28. Կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվելու դեպքում շտեմարանում ինքնաշխատ եղանակով արձանագրվում են կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվելու օրը, ամիսը, տարեթիվը, պատճառը՝ ըստ ծառայության սահմանած դասակարգման, ինչպես նաև համապատասխան տեղեկատվությունը շտեմարան մուտքագրելու հիմքը (դիմում կամ վարչական ակտ)։

29. Կենսաթոշակ վճարելն ինքնաշխատ եղանակով վերսկսվում է կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելուն հաջորդող ամսվա 1-ից՝

1) վարչական ակտի (շտեմարան մուտքագրված տեղեկատվության) հիման վրա կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու դեպքում.

2) դիմումի (շտեմարան մուտքագրված տեղեկատվության) հիման վրա կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու դեպքում, եթե դիմումը ներկայացրել է անձամբ կենսաթոշակատուն կամ անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող կենսաթոշակատուի՝ շտեմարանում հաշվառված օրինական ներկայացուցիչը.

3) օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերած անձի՝ տարիքային կենսաթոշակի իրավունք տվող տարիքը լրանալու դեպքում։

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

26 սեպտեմբերի 2019թ.

N 800-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 7-Ի N130-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը

որոշում է.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 7-ի «Մեսրոպ Մաշտոց համալսարանի» կովկասագիտություն մասնագիտության բակալավրի առկա և հեռակա ուսուցման վճարովի համակարգում սովորող բարձր առաջադիմություն ունեցող ուսանողների ուսման վարձավճարի փոխհատուցման կարգը հաստատելու մասին» N130-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետում «երկրորդ» բառը փոխարինել «առաջին» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

30 սեպտեմբերի 2019թ.

N 806-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄ, ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 1135-Ն
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածները և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարել վերաբաշխում և Արցախի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 28-ի «Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին» N 1135-Ն որոշման N 2 հավելվածի N 1 աղյուսակի ցուցանիշներում կատարել փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի սեպտեմբերի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

**«ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇՇՈՒՄԸ ԵՎ ԱՐՑԱՒԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
28-Ի N 1135-Ն ՈՐՈՇՄԱՆ N 2 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 1 ԱՂՅՈՒՍԱԿԻ
ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

(հազար դրամ)

Բաժին	Խումբ	Դաս	Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, ֆինանսավորվող ծրագրերի և վերջիններս իրականացնող մարմինների անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)			
				Առաջին եռամսյակ	Առաջին կիսամյակ	Ինն ամիս	Տարի
			ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ այդ թվում՝	-	-	-	-
01			ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՑԹԻ ՀԱՆՐԱՑԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	-	-
	1		Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և իարկայությունների հարաբերություններ, արտաքին հարաբերություններ	-	-	3 252,0	-
		1	Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում	-	-	3 252,0	-
		03	Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում	-	-	3 252,0	-
			ԱՀ արդարադատության նախարարություն	-	-	3 252,0	-
	3		Ընդհանուր բնույթի ծառայություններ	-	-	(3 252,0)	-
		3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	-	-	(3 252,0)	-
		02	Պաշտոնական տեղեկագրի հրատարակման ծախսեր	-	-	(3 252,0)	-
			ԱՀ արդարադատության նախարարություն	-	-	(3 252,0)	-
03			ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴՍՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	-	-	(5 600,0)	-
	1		Հասարակական կարգ և անվտանգություն	-	-	3 643,4	-
		1	Ոստիկանություն	-	-	3 643,4	-
		03	Արտագերատեսչական պահակության պահպանություն	-	-	3 643,4	-
			ԱՀ ֆինանսների նախարարություն	-	-	3 643,4	-
	3		Դատական գործունեություն և իրավական պաշտպանություն	-	-	(9 243,4)	-
		2	Իրավական պաշտպանություն	-	-	(9 243,4)	-
		01	Քաղաքացիներին և իրավաբանական անձանց պատճառված վնասի և այլ պարտավորությունների հատուցման ենթակա ծախսեր	-	-	(9 243,4)	-

			ԱՀ ֆինանսների նախարարություն	-	-	(9 243,4)	-
04			ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	-	-	8 000,0	-
	1		Ընդհանուր բնույթի տնտեսական, առևտրային և աշխատանքի գծով հարաբերություններ	-	-	3 000,0	-
		1	Ընդհանուր բնույթի տնտեսական և առևտրային հարաբերություններ	-	-	3 000,0	-
		04	Պետական աջակցություն «Արցախի տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» հիմնադրամին	-	-	3 000,0	-
			ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարություն	-	-	3 000,0	-
	7		Այլ բնագավառներ	-	-	5 000,0	-
		2	Հյուրանոցներ և հասարակական սննդի օբյեկտներ	-	-	5 000,0	-
		01	Պատվիրակությունների ընդունելություններ	-	-	5 000,0	-
			ԱՀ Նախագահի աշխատակազմի «Կառավարության գործերի կառավարչություն» առանձնացված ստորաբաժանում	-	-	5 000,0	-
08			ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ԿՐՈՆ	-	-	2 600,0	-
	3		Ռադիո և հեռուստահաղորդումների հեռարձակման և հրատարակչական ծառայություններ	-	-	2 600,0	-
		1	Հեռուստահաղորդումներ	-	-	2 600,0	-
		02	Հեռուստատեսային և ռադիո ծառայություններ	-	-	2 600,0	-
			ԱՀ հանրային հեռուստահաղորդումներին կապակցված խորհուրդ	-	-	2 600,0	-
10			ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	-	-	(320 000,0)	-
	2		Ծերություն	-	-	(320 000,0)	-
		1	Ծերություն	-	-	(320 000,0)	-
		07	Կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրում	-	-	(320 000,0)	-
			ԱՀ ֆինանսների նախարարություն	-	-	(320 000,0)	-
11			ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉՐԱՍՎՈՂ ԾԱԽՄԵՐ	-	-	315 000,0	-
	2		Այլ ծախսեր	-	-	315 000,0	-
		1	Այլ ծրագրեր	-	-	315 000,0	-
		02	Կապիտալ ներդրումներ	-	-	300 000,0	-
			ԱՀ քաղաքաշինության նախարարություն	-	-	290 000,0	(10 000,0)
			ԱՀ պաշտպանության նախարարություն	-	-	10 000,0	10 000,0
		03	Հանրապետական միջոցառումների (միջազգային կազմակերպությունների մասնակցությամբ) իրականացման ծրագրեր	-	-	20 000,0	-
			ԱՀ կառավարություն	-	-	20 000,0	-
		06	Գույքի գնման ծախսեր	-	-	15 000,0	20 000,0
			ԱՀ կառավարություն	-	-	15 000,0	20 000,0
		07	Նախորդ տարիներից առաջացած պարտքերի մարում	-	-	(20 000,0)	(20 000,0)
			ԱՀ կառավարություն	-	-	(20 000,0)	(20 000,0)

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2 հոկտեմբերի 2019թ.

N 814-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **առ ոչ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 641 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Սարտակերտի շրջանի Կոճողոտի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,024 հեկտար արոտավայրը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության՝ հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2 հոկտեմբերի 2019թ.

N 815-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 21-ի N 638 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Վերին Հոռաթաղի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,15 հեկտար արոտավայրը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

3 հոկտեմբերի 2019թ.

N 827-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի հուլիսի 31-ի N 380 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Ասողաշենի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,0078 հեկտար արոտավայրը և բնակավայրերի նպատակային նշանակության 0,013 հեկտար հասարակական կառուցապատման հողերը փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

3 հոկտեմբերի 2019թ.

N 828-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՑԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ
ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ա ղ ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 1-ի N 599 որոշմամբ հաստատված՝ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանի Խնածախի գյուղական համայնքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում՝ համաձայն հավելվածի, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության 0,0009 հեկտար այլ հողատեսքերը փոխադրել էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների նպատակային նշանակության՝ էներգետիկայի օբյեկտների հողերի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

3 հոկտեմբերի 2019թ.

N 829-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ՃԱՆԿԱԹԱՂԻ
ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՈՐՈՇ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ ԲԱՑԱՌԻԿ՝ ԳԵՐԱԿԱ
ՀԱՆՐԱՅԻՆ ՇԱՀ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հոդային օրենսգրքի 104-րդ հոդվածը, «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» օրենքի 2-րդ, 4-րդ, 7-րդ և 12-րդ հոդվածները, ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով և հաշվի առնելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 21-ի N 430-Ն որոշումը՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Կաշենի հանքավայրի արդյունաբերական շահագործման նախապատրաստական աշխատանքների ծրագրի իրականացման համար սույն որոշման հավելվածում նշված՝ Կաշենի հանքավայրի շահագործման նպատակով հանքավայրի արտադրական կառույցներին և տեղամասերին հարող սանիտարական պաշտպանիչ գոտու եզրագծում՝ օտարման գոտում ներառված տարածքների նկատմամբ ճանաչել բացառիկ՝ գերակա հանրային շահ՝ հետևյալ հիմնավորումներով՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված աշխատանքների իրականացման շահը գերակայում է օտարվող սեփականության սեփականատերերի (օգտատերերի) շահերից, քանի որ այն նպատակ է հետապնդում Արցախի Հանրապետության տնտեսության առաջընթացի ապահովման համար նախատեսվող լայնածավալ ծրագրի իրագործմամբ ստեղծել կայուն պայմաններ՝ հանքարդյունաբերության զարգացման համար:

2) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի արդյունավետ իրականացումը չի կարող ապահովվել առանց նշված սեփականության օբյեկտների օտարման, քանի որ դրանք գտնվում են ծրագրով նախատեսված օտարման գոտու տարածքում:

3) սույն որոշման հավելվածում նշված տարածքների նկատմամբ ճանաչված բացառիկ՝ գերակա հանրային շահը չհիմնավորված վնաս չի պատճառում նշված տարածքների սեփականատերերին (օգտատերերին):

2. Սահմանել, որ՝

1) բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված տարածքները ձեռք բերող է հանդիսանում Արցախի Հանրապետությունը, որի անունից հանդես է գալիս Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությունը (այսուհետ՝ պետական լիազորված մարմին):

2) սեփականության օտարման գործընթացն սկսելու վերջնական ժամկետ է սահմանվում սույն որոշման հրապարակման օրվանից ոչ ուշ, քան երեք ամիսը.

3) օտարման գործառույթների իրականացման աշխատանքների համակարգող և պատասխանատու պետական լիազորված մարմինը Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարությունն է:

3. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուն հաջորդող յոթ օրվա ընթացքում այն պատշաճ ձևով ուղարկել օտարվող սեփականության սեփականատերերին (օգտատերերին).

2) ապահովել սույն որոշմամբ սահմանված բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչված օբյեկտների նկատմամբ սույն որոշումից բխող գույքային իրավունքների պետական գրանցումը՝ օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում՝ սույն որոշմամբ սահմանված ձեռք բերողի սեփական միջոցների հաշվին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ց Ա Ն Կ
ՕՏԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ

Հ/հ	Մեփականատիրոջ (օգտատիրոջ) անուն, ազգանունը	Հողատեսքը	Հողամասի ծածկագիրը (կադաստրային համարը)	Մակերեսը (հա)
1	Լիդա Գրիգորյան	վարելահող	106-005	0,54
2	Գեղամ Սարգսյան	վարելահող	105-009	0,56
3	Գեղամ Սարգսյան	վարելահող	105-010	2,83
4	Գեղամ Սարգսյան	վարելահող	103-002	1,06
5	Արզիկ Բաբայան	վարելահող	104-021	0,48
6	Ռուբեն Մարտիրոսյան	վարելահող	103-003	1,22
7	Գյուլշորա Մնացականյան	վարելահող	102-002	1,71
8	Էմմա Սկրտչյան	վարելահող	104-023	0,55
9	Յուրա Բաբայան	վարելահող	103-022	1,07
10	Բենիկ Բուդաղյան	վարելահող	106-001	1,72
	Մեյրան Բուդաղյան			
	Աիդա Ղալայան			
11	Կամո Փիրյան	վարելահող	104-022	3,04
	Աիդա Փիրյան			
12	Արմեն Սարգսյան	վարելահող	104-014	1,02
	Ալվարդ Սարգսյան			
13	Վովիկ Մովսիսյան	վարելահող	104-013	5,26
	Ռիմա Մովսիսյան			
	Սվետլանա Մովսեսյան			
	Սուսաննա Եսայան /Մովսիսյան/			
	Ռոբերտ Մովսեսյան			
	Ռուզաննա Մովսեսյան			
	Ռաֆիկ Մովսիսյան			
	Հայկ Մովսիսյան			
Հմայակյան Մովսեսյան				
14	Օնիկ Ավանեսյան	վարելահող	104-005	2,82
	Անյուտա Ավանեսյան			
	Մելինե Ավանեսյան			
	Մելսիկ Ավանեսյան			
15	Մարատ Ավանեսյան	վարելահող	102-001	2,77
	Զինա Սկրտչյան			
	Նորայր Խաչատրյան			
16	Արսեն Խաչատրյան	վարելահող	103-015	2,54
	Ավետիք Խաչատրյան			
	Մասուն Սարգսյան			
	Մերի Սարգսյան			
17	Մանվել Սարգսյան	վարելահող	103-016	3,0
	Մարգարիտա Բալասանյան /Բարսեղյան/			
17	Վլադիմիր Շահբազյան	վարելահող	103-016	3,0

	Մարո Շահբազյան			
	Կարինե Շահբազյան			
	Արմեն Շահբազյան			
	Վլաչեսլավ Շահբազյան			
18	Լաուրա Մարտիրոսյան	վարելահող	105-012	2,86
	Գագիկ Մարտիրոսյան			
	Կարինե Մարտիրոսյան			
	Ռիկո Մարտիրոսյան			

ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

7 հոկտեմբերի 2019թ.

N 836-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2000 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի N 45 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը

որոշում է.

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի մարտի 21-ի ««Հայրենական մեծ պատերազմի վետերանների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող միջոցառումների մասին» N 45 որոշման 1-ին կետում «50 000 դրամ» բառերը փոխարինել «100 000 ՀՀ դրամ» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի օգոստոսի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՅԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ.

ՍԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

7 հոկտեմբերի 2019թ.

N 837-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 663-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ,
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի N 285-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԵՎ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11-Ի N 143-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 14-ի ««Զբաղվածության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովող իրավական ակտեր սահմանելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 663-Ն որոշմամբ սահմանված N 8 հավելվածի 8-րդ կետի 3-րդ ենթակետում «հարկը» բառից հետո լրացնել «և օրենքով սահմանված դեպքերում՝ պարտադիր դրոշմանիշային ու սոցիալական վճարները» բառերը:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2017 թվականի ապրիլի 26-ի «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման կարգը հաստատելու մասին» N 285-Ն որոշմամբ հաստատված հավելվածում կատարել հետևյալ լրացումները.

1) 8-րդ կետում «հարկը» բառից հետո լրացնել «և օրենքով սահմանված դեպքերում՝ սոցիալական վճարը» բառերը.

2) 22-րդ կետում «հարկը» բառից հետո լրացնել «և օրենքով սահմանված դեպքերում՝ պարտադիր դրոշմանիշային և սոցիալական վճարները» բառերը:

3. Արցախի Հանրապետության կառավարության 2019 թվականի մարտի 11-ի «Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրման կարգը հաստատելու մասին» N 143-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 14-րդ կետում «վճարի» բառը փոխարինել «և սոցիալական վճարների» բառերով:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ**

Բ. ՄԱՀԱԿՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

11 հոկտեմբերի 2019թ.

N 843-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ԿԻՉԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ, ԿԻՉԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ՔԱՇԱԹԱՂԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐԸ ՖԻՆԱՆՍԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, Ընտրական օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ մասի և 145-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջների և ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 6-րդ և 92-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է**:

1. Վաղաժամկետ դադարեցնել Մարտակերտի շրջանի Կիչան համայնքի ղեկավար Գարիկ Արմենակի Սարգսյանի լիազորությունները:

2. 2019 թվականի նոյեմբերի 17-ին Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի Կիչան համայնքում նշանակել համայնքի ղեկավարի, իսկ Արցախի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Վան համայնքում՝ համայնքի ավագանու անդամների արտահերթ ընտրություններ:

3. Արցախի Հանրապետության ֆինանսների նախարարությանը՝ սույն որոշման 2-րդ կետում նշված համայնքներում արտահերթ ընտրությունների նախապատրաստման և անցկացման ծախսերը ֆինանսավորելու համար Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի պահուստային ֆոնդի միջոցներից Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին հատկացնել 520 416 (հինգ հարյուր քսան հազար չորս հարյուր տասնվեց) ՀՀ դրամ՝ համաձայն N 1 և N 2 հավելվածների:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ, ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԵՎ ԿԻՉԱՆԻ ՏԵՂԱՄԱՍՍՑԻՆ ԸՆԴՀԱՆՍՈՒՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ՝
ԿԱՊՎԱԾ ԿԻՉԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԵՏ

Հոդված	Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով	Գու- մարդ
4115	Աշխատավարձի ֆոնդ (փոխհատուցում) աղ թվում՝ ՏեղԸՀ նախագահ 1 մարդ x 1 ամիս x 44 000 դրամ = 44 000 դրամ ՏեղԸՀ նախագահի տեղակալներ և քարտուղարներ 2 մարդ x 1 ամիս x 1 տեղ x 27 500 դրամ = 55 000 դրամ ՏեղԸՀ անդամներ 5 մարդ x 1 ամիս x 1 տեղ x 16 500 դրամ = 82 500 դրամ	181 500 44 000 55 000 82 500
4214	Կապի ծառայություններ	1 000
	ՏեղԸՀ – 1 տեղ x 1 000 դրամ = 1 000 դրամ	
4234	Տեղեկատվական ծառայություններ	26 360
	Այդ թվում՝ արձանագրությունների ձևեր 1 տեղ x 50 հատ x 20 դրամ = 1 000 դրամ քվեաթերթիկների տպագրություն հ/դ 120 հատ x 18 դրամ = 2 160 դրամ քվեարկության կարգը (պլակատ) 1 հատ x 500 դրամ = 500 դրամ վկայականների ձևեր 1 տեղ x 40 հատ x 150 դրամ = 6 000 դրամ ուղեցույց 1 հատ x 1 200 դրամ = 1 200 դրամ գրանցամատյան 1 հատ x 1 500 դրամ = 1 500 դրամ պաստառ 1 հատ x 5 մ x 2 800 դրամ = 14 000 դրամ	1 000 2 160 500 6 000 1 200 1 500 14 000
4261	Գրասենյակային նյութեր և հագուստ	1 000
4264	Տրանսպորտային նյութեր Բենզին 70 լիտր x 460 դրամ = 32 200 դրամ	32,200
	ԸՆԴԱՄԵՆԸ	242 060

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Ն Ա Խ Ա Հ Ա Շ Ի Վ
ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ, ՔԱՇԱԹԱՂԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ
ՎԱՆԻ ՏԵՂԱՄԱՍՍՑԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԾԱԽՍԵՐԻ՝
ՎԱՊՎԱԾ ՎԱՆ ՀԱՄԱՑՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆՂԱՄՆԵՐԻ ԱՐՏԱՀԵՐԹ
ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՀԵՏ

Հոդված	Արցախի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողով	Գու- մարդ
4115	Աշխատավարձի ֆոնդ (փոխհատուցում) ադ թվում՝ ՏեղՀՀ նախագահ 1 մարդ x 1 ամիս x 44 000 դրամ = 44 000 դրամ ՏեղՀՀ նախագահի տեղակալներ և քարտուղարներ 2 մարդ x 1 ամիս x 1 տեղ x 27 500 դրամ = 55 000 դրամ ՏեղՀՀ անդամներ 5 մարդ x 1 ամիս x 1 տեղ x 16 500 դրամ = 82 500 դրամ	181 500 44 000 55 000 82 500
4214	Կապի ծառայություններ	1 000
4234	ՏեղՀՀ – 1 տեղ x 1 000 դրամ = 1 000 դրամ Տեղեկատվական ծառայություններ	25 856
	Այդ թվում՝ արձանագրությունների ձևեր 1 տեղ x 50 հատ x 20 դրամ = 1 000 դրամ քվեաթերթիկների տպագրություն ավագանի 92 հատ x 18 դրամ = 1656 դրամ քվեարկության կարգը (այլակատ) 1 հատ x 500 դրամ = 500 դրամ վկայականների ձևեր 1 տեղ x 40 հատ x 150 դրամ = 6 000 դրամ ուղեցույց 1 հատ x 1 200 դրամ = 1 200 դրամ գրանցամատյան 1 հատ x 1 500 դրամ = 1 500 դրամ պատտառ 1 հատ x 5 մ x 2 800 դրամ = 14 000 դրամ	1 000 1 656 500 6 000 1 200 1 500 14 000
4261	Գրասենյակային նյութեր և հագուստ	1 000
4264	Տրանսպորտային նյութեր Բենզին 150 լիտր x 460 դրամ = 69 000 դրամ	69,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	278 356

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ-ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«26» սեպտեմբերի 2019 թվականի

N 56-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N 53-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ և 38-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **որոշում է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշման 1-ին կետով հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգում (այսուհետ՝ Կարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կարգի 33-րդ կետից հանել «Էլեկտրական էներգիայի» բառերը.

2) Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ 33.1-ին և 33.2-րդ կետերով.

«33.1. Էլեկտրական էներգիայի արտադրության (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) լիցենզիայում, բացառությամբ սույն կարգի 33.2-րդ կետում նշված դեպքի, կառուցման ժամանակահատված սահմանվում է՝

1) 2 տարի՝ մինչև 5 ՄՎտ տեղակայվող հզորությամբ արևային կայանի և մինչև 30 ՄՎտ տեղակայվող (հաշվարկային) հզորությամբ վերականգնվող էներգետիկ ռեսուրսներ օգտագործող այլ կայանի դեպքում, բացառությամբ փոքր հիդրոէլեկտրակայանի և սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված դեպքի.

2) 3 տարի՝ փոքր հիդրոէլեկտրակայանի դեպքում, բացառությամբ սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված դեպքի.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով չնախատեսված այլ տեսակի կայանի, ինչպես նաև 30 ՄՎտ-ը գերազանցող վերականգնվող էներգետիկ

ռեսուրսներ օգտագործող կայանի դեպքում՝ համաձայն հայցվող ժամկետի և գործարար ծրագրի (փորձաքննություն անցած նախագծի)։

4) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նշված կայաններում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ստանալու համար ներկայացված հայտով հայցվող ժամկետով, եթե այն պակաս է նշված ենթակետերով սահմանված ժամկետներից։

33.2. Պետություն-մասնավոր գործընկերություն գործարքի շրջանակում տրամադրվող էլեկտրական էներգիայի արտադրության (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության) լիցենզիայում կառուցման ժամանակահատվածը ամրագրվում է համաձայն այդ գործարքի»։

3) Կարգի 74-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«74. Տեղական էներգետիկական պաշարների, էներգիայի վերականգնվող աղբյուրների արդյունավետ օգտագործման, ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթանման նպատակով էլեկտրական էներգիայի, ջերմային էներգիայի կամ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգվում է.

1) 1-ին անգամ երկարաձգվելու դեպքում՝ լիցենզիայում ամրագրված ժամանակահատվածից 2 ամիս պակաս ժամկետով, բացառությամբ սույն կետի 3-րդ, 4-րդ ենթակետերով և 74.1-ին կետով նախատեսված դեպքերի.

2) 2-րդ և յուրաքանչյուր հաջորդ անգամ երկարաձգվելու դեպքում՝ նախորդ երկարաձգման ժամկետից 2 ամիս պակաս ժամկետով, բացառությամբ սույն կետի 3-րդ, 4-րդ ենթակետերով և 74.1-ին կետով նախատեսված դեպքերի.

3) Լիցենզավորված անձի կողմից Նախագիծը ներկայացնելու դեպքում՝ կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածից կամ նախորդ երկարաձգման ժամկետից կրճատելով Նախագծի ներկայացման համար լիցենզիայի պայմաններով սահմանված ժամկետը (եթե այն պակաս չէ 2 ամսից)՝ բացառությամբ սույն կետի 4-րդ ենթակետով և 74.1-ին կետով նախատեսված դեպքերի.

4) Լիցենզավորված անձի դիմումով հայցվող ժամկետով, եթե այն պակաս է սույն կետի 1-3-րդ ենթակետերի համաձայն հաշվարկված ժամկետից»։

4) Կարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 74.1-ին կետով.

«74.1. Սույն կարգի 74-րդ կետով սահմանված կարգավորումը կիրառելի չէ կառուցման (վերակառուցման) 6 ամիս և (կամ) պակաս ժամանակահատվածի պարագայում, իսկ եթե կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը նույն կետի համաձայն կրճատվելու դեպքում կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը կկազմի 6 ամսից պակաս, ապա այն կրճատվում է այնքանով, որ տվյալ ժամանակահատվածը կազմի 6 ամիս»։

5) ուժը կորցրած ճանաչել Կարգի 2-րդ հավելվածի 1-ին կետի 3-րդ ենթակետը.

6) Կարգի 4-րդ հավելվածի 11-րդ կետում «փուլերի» բառից հետո լրացնել «(ներառյալ՝ կայանի կառուցման նախագծի կազմման և փորձաքննությունների անցկացման ժամկետները)» բառերը։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Մ. ՎԻՐԱԲՅԱՆ

2019 թվականի սեպտեմբերի 26,
ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

2019 թվականի սեպտեմբերի 26-ի

**ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի ԹԻՎ 198 ՀՐԱՄԱՆԸ ՈՒԺԸ
ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 119-Ն

Հ Ր Ա Մ Ա Ն

Հիմք ընդունելով «Նոտարիատի մասին» օրենքի 44-րդ հոդվածի 7-րդ կետը և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Սահմանել Նոտարական գործավարության կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարի 2005 թվականի հոկտեմբերի 3-ի «Նոտարական գործավարության կարգը հաստատելու մասին» թիվ 198 հրամանը:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա.Դանիելյան

**2019 թվականի սեպտեմբերի 26
ք. Ստեփանակերտ**

Կ Ա Ր Գ
ՆՈՏԱՐԱԿԱՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է նոտարների կողմից նոտարական գործավարության իրականացման օրինակելի կարգն ու պայմանները:

2. «Նոտարիատի մասին» օրենքի (այսուհետև՝ օրենք) 30-րդ հոդվածին համապատասխան՝ նոտարական գործավարությունը տարվում է հայերեն լեզվով:

3. Նոտարական գործավարությունը ճիշտ կազմակերպելու և վարելու համար պատասխանատվություն է կրում նոտարը՝ անկախ այն հանգամանքից, թե նա այդ աշխատանքներն իրականացնում է անձամբ, թե նրա ստաժորը կամ նոտարի աշխատողը:

4. Պաշտոնից ազատված նոտարը պարտավոր է ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում իր մոտ պահպանված նոտարական գործողություններին վերաբերող փաստաթղթերն ու կնիքը հանձնել արդարադատության նախարարություն: Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ, 7-րդ և 8-րդ ենթակետերով նախատեսված հիմքերով ազատված նոտարի կամ նույն հոդվածի 4-րդ կետով նախատեսված դեպքերում լիազորությունները դադարեցրած նոտարի մոտ պահպանված փաստաթղթերն ու կնիքն ընդունում է արդարադատության նախարարի ստեղծած հանձնաժողովը:

5. Նոտարական վկայագրերն ու վավերացման մակագրությունները կազմելու, նոտարական գործողությունները գրանցելու գրանցամատյանները, ինչպես նաև նոտարական գործողություններ կատարելու հետ կապված մյուս մատյանները վարելու կարգը, գործարքների և վավերացվող փաստաթղթերի վրայի վավերացման մակագրությունները կանոնակարգվում են «Նոտարիատի մասին» օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

6. Փաստաթղթերի հաշվառման և դրանց կատարումը վերահսկելու համար նոտարը պետք է վարի մատյաններ՝ համաձայն NN 1-6-րդ հավելվածների: Նոտարն իրավունք ունի երկու մատյանը վարել մեկ գրքում:

7. Պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գործավարությունն իրականացվում է օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Նոտարական գաղտնիք պարունակող փաստաթղթերի գործավարությունն իրականացվում է «Նոտարիատի մասին» օրենքով և դրա հիման վրա ընդունված իրավական այլ ակտերով սահմանված կարգով:

2. ՍՏԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ

9. Նոտարի կողմից ստացվող ամբողջ թղթակցությունը նույն օրը գրանցվում է մտից գրագրությունների մատյանում: Թղթակցություններն ընդունում է նոտարը կամ նրա կողմից լիազորված աշխատակիցը, ինչպես նաև նոտարի ստաժորը: Նոտարն իրավունք ունի գործավարության իրականացման պարտականությունները դնել մեկից ավելի անձանց վրա: Նոտարի մյուս աշխատակիցներին կամ ստաժորներին արգելվում է անմիջականորեն ծառայական թղթակցություն ընդունել:

10. Մուտքագրված փաստաթղթի առաջին էջի վրա նշվում է ստացված փաստաթղթի հերթական համարը, ամիսը, ամսաթիվը և տարին:

11. Ծրարները բացելիս ստուգվում են փաստաթղթերի և ծրարների համարների համապատասխանությունը: Ծրարում փաստաթղթի կամ նրա հավելվածների բացակայության, ծրարի և փաստաթղթի համարների անհամապատասխանության դեպքում կազմվում է ակտ (արձանագրություն) երկու օրինակից, որոնցից մեկն առաքվում է ուղարկողին, իսկ մյուսը մնում է նոտարի մոտ: Ծրարի վնասվածության մասին նշվում է փոստային ցուցակում (ռեեստր) և ծրարի վրա: Ծրարները որպես կանոն, ոչնչացվում են, բացի սույն կարգով նախատեսված դեպքերից: Ստացվող ծրարները կցվում են փաստաթղթերին այն դեպքում, երբ միայն ծրարով կարելի է որոշել առաքողի հասցեն, փաստաթղթի առաքման և ստացման ժամանակը, երբ ծրարում բացակայում են առանձին փաստաթղթեր կամ էլ հայտնաբերվում է ծրարների ու փաստաթղթերի համարների, ինչպես նաև առաքման և ստացման ժամկետների ակնհայտ անհամապատասխանություն:

12. Միայլ կազմված (չստորագրված, չվավերացված), վնասված կամ ոչ ըստ հասցեի ուղարկված փաստաթղթերը վերադարձվում են առաքողին կամ վերաառաքվում ըստ պատկանելույն:

13. Յուրաքանչյուր փաստաթուղթ նոտարի մոտ գրանցվում է միայն մեկ անգամ:

14. Եթե գործավարությունը նոտարի կողմից չի իրականացվում, ստացված բոլոր փաստաթղթերը գրանցումից հետո զեկուցվում են նոտարին:

3. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ

15. Նոտարի բոլոր ծառայական փաստաթղթերը կազմվում են նրա ձևաթղթերի վրա: Փաստաթուղթ չի ստեղծվում այն հարցերով, որոնց լուծումը հնարավոր է օպերատիվ կարգով, անձնական հանդիպումների կամ հեռախոսային խոսակցության միջոցով: Բանավոր կարգով կարգավորված հարցերով կատարողն այդ մասին համապատասխան նշում է կատարում փաստաթղթի վրա: Որոշ փաստաթղթեր (հիմնականում ներքին) թույլատրվում է ձևակերպել առանց ձևաթղթի (աշխատողների դիմումներ, ծառայական առանձին տեղեկանքներ և այլն):

16. Փաստաթղթերի բովանդակությունը պետք է շարադրվի համառոտ, գրագետ, ըմբռնելի և առանց կրկնությունների: Հիմնարկների անվանումների կամ պաշտոնապես ընդունված անվանումների, տերմինների ինքնակամ կրճատումներ չի թույլատրվում:

17. Նոտարի հրամանների կամ որոշումների համարակալումը կատարվում է մնացած փաստաթղթերից առանձին, յուրաքանչյուր տարվա համար՝ տվյալ տարվա սկզբից հաշված:

18. Նոտարական գրասենյակի կողմից ուղարկվող փաստաթղթերը գրանցվում են էլից գրագրությունների մատյանում: Ելից փաստաթղթերն անպայման հասցեագրվում են: Փաստաթղթերը հասցեագրվում են պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին, պետական հիմնարկին կամ կազմակերպությանը, համայնքային կազմակերպությանը (այսուհետև՝ կազմակերպություն), դրանց կառուցվածքային ստորաբաժանումներին կամ կոնկրետ պաշտոնատար անձին: Կազմակերպության կամ նրա կառուցվածքային ստորաբաժանման անվանումը, որոնց հասցեագրվում է նամակը, շարադրվում է ուղղական հոլովով: Եթե փաստաթուղթն ուղարկվում է պաշտոնատար անձի, ապա կազմակերպության անվանումը և հասցեատիրոջ պաշտոնը նշվում են ուղղական հոլովով, իսկ ազգանունը՝ տրական հոլովով:

19. Հասցեատիրոջ փոստային հասցեն ցույց է տրվում լրիվ՝ փոստային դասիչը, պետությունը, քաղաքը, շրջանը, փոստային բաժանմունքի համարը, փողոցը, տան համարը: Փաստաթուղթն առանձին քաղաքացիների հասցեագրելիս, սկզբից ցույց է տրվում փոստային հասցեն, իսկ այնուհետև՝ նրանց ազգանունը:

20. Հարցումներին և այլ գրագրություններին պատասխանելիս հասցեագրումից հետո, վերևի ձախ մասում, նշվում է այն փաստաթղթի ամիս, ամսաթիվը, տարին և

համարը, որին պատասխանվում է: Օրինակ՝ «Ձեր 20__ թ. հոկտեմբերի 20-ի թիվ -- գրության»:

21. Բոլոր ծառայական փաստաթղթերը թվագրվում են: Թվագրման կազմի մեջ են մտնում ամսաթիվը, ամիսը և տարեթիվը: Փաստաթղթի վրա ամսաթիվը և տարեթիվը դրվում են արաբական թվանշաններով, իսկ ամիսը՝ տառերով գրվելու միջոցով (10 մարտի 2019թ.), կամ արաբական 3 գույգ թվերով (10.06.19) և անջատվում են կետերով: Եթե ամսվա հերթական համարները կամ ամսաթվերը բաղկացած են մեկ թվից, ապա դրանցից առաջ 0 է դրվում: Օրինակ՝ 05.01.19թ.:

22. Փաստաթղթի վրա թվագրումը դրվում է այն ստորագրող կամ հաստատող անձի կողմից՝ ստորագրման կամ հաստատման պահին: Փաստաթղթերի ստորագրման թվագրումը դրվում է փաստաթղթի վերևի ձախ մասում՝ ձևաթղթի մեջ դրա համար հատուկ հատկացված տեղում: Եթե փաստաթուղթը ձևաթղթի վրա չի կազմված, նրա թվագրումը դրվում է ստորագրության տակ՝ ձախից:

23. Ստորագրվում է, որպես կանոն, փաստաթղթի առաջին օրինակը: Փաստաթուղթը միաժամանակ մի քանի հասցեատերերի ուղարկվելու դեպքում ստորագրվում են դրա բոլոր օրինակները:

24. Նոտարի բոլոր ելից փաստաթղթերը կարող են ստորագրվել միայն նոտարի կողմից:

25. Հանձնաժողովների կողմից կազմված փաստաթղթերը ստորագրելիս ցույց են տրվում ոչ թե փաստաթուղթը կազմող անձանց պաշտոնները, այլ հանձնաժողովի կազմում պարտականությունների բաշխումը, օրինակ. հանձնաժողովի նախագահ (ստորագրություն), հանձնաժողովի անդամներ (ստորագրություններ):

26. Նոտարի մոտ թողնվող ելից փաստաթղթերի պատճենների վրա ձևաթղթի տեքստը կարող է չվերարտադրվել, այլ դրվել միայն փաստաթղթերի ստորագրման թվագրումը և նրա գրանցման դասիչը, ստորագրման թվագրումը:

27. Նոտարի գործունեությամբ ստեղծվող փաստաթղթերին կից հավելվածների առկայությունը ցույց է տրվում հիմնական կամ ուղեկցող փաստաթղթերում նրա տեքստից հետո (ստորագրությունից վերև), առդիր բառից հետո, ցույց տալով նրանց անվանումները, թերթերի և կցվող օրինակների քանակը: Մի քանի հավելվածների առկայության դեպքում դրանց վրա դրվում են հերթական համարներ:

28. Նոտարի կնիքը դրվում է նոտարի կողմից վավերացվող կամ հաստատվող կամ նոտարի կողմից տրվող բոլոր փաստաթղթերի կամ հաշվետվությունների, ինչպես նաև դրանց կրկնօրինակների վրա:

29. Այն գրությունների և փաստաթղթերի առաքման մասին, որոնք պատրաստվել են ի կատարումն ստացված գրությունների, կատարվում է նշում ելից գրագրությունների մատյանում՝ ցույց տալով փաստաթղթի համարը, գրանցման թվագրումը, փաստաթղթի վերնագիրը (համառոտ բովանդակությունը) և գործի համարը, որում պետք է պահվի դրա պատճենը:

30. Միևնույն հասցեատիրոջն ուղարկվող տարբեր փաստաթղթերը կարելի է ուղարկել մեկ ծրարով, ծրարի վրա նշելով նրանում գտնվող բոլոր փաստաթղթերի գրանցման համարները:

31. Փաստաթղթերն առաքվում են ցրիչի միջոցով կամ փոստով:

4. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏԱՄԲ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

32. Հսկողության են ենթակա այն փաստաթղթերը (մտից, ելից, ներքին), որոնցում ցույց են տրված կատարման ժամկետները կամ որոնց կատարման համար օրենսդրությամբ սահմանված են ժամկետներ:

33. Պարտադիր կարգով հսկողության են վերցվում՝

1) Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության հանձնարարականներ, առաջադրանքներ պարունակող կամ նոտարի կողմից

կատարման ենթակա Արցախի Հանրապետության օրենքները, Արցախի Հանրապետության Ազգային ժողովի որոշումները, Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրերը և կարգադրությունները, Արցախի Հանրապետության կառավարության որոշումները, Արցախի Հանրապետության արդարադատության նախարարի հրամանները.

2) քաղաքացիների դիմումները և բողոքները:

5. ՆՈՍՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

34. Բնօրինակ փաստաթղթերը (փաստաթղթերի բնօրինակները) (ծննդյան, ամուսնության, մահվան վկայական, անձը հաստատող փաստաթղթեր, կազմակերպության կամ հիմնարկի հիմնադիր փաստաթղթեր, դրանց փոփոխություններ, գրանցման (հաշվառման) վկայականներ և այլն) վերադարձվում են փաստաթուղթը ներկայացնող անձանց՝ նոտարի մոտ թողնելով դրանց պատճենները: Պատճենները ներկայացնում են շահագրգռված անձինք, կամ նրանց խնդրանքով պատրաստվում են նոտարի կողմից՝ հավաստելով դրանց համապատասխանությունը բնօրինակի հետ՝ կնքելով և նշելով ամսաթիվը: Եթե բնօրինակ փաստաթուղթը գտնվում է տվյալ նոտարի մոտ գտնվող այլ նոտարական գործում, ապա դրա պատճենի վրա նշվում է այն գործի գրանցամատյանի համարը և տարին, ամիսը, ամսաթիվը, որտեղ գտնվում է այդ բնօրինակը և կնքվում է նոտարի կնիքով:

35. Նոտարական գործողությունների համար դիմած քաղաքացիների, նրանց ներկայացուցիչների կամ կազմակերպությունների և հիմնարկների ներկայացուցիչների ինքնությունը հաստատող փաստաթղթերը վերադարձվում են ներկայացնողներին, միաժամանակ գրանցամատյանում գրանցվում են փաստաթղթի անվանումը, նրա համարը, երբ և որ կազմակերպության կամ հիմնարկի կողմից է տրված այդ փաստաթուղթը:

36. Նոտարի մոտ թողնվում են՝

1) կազմակերպությունների կամ հիմնարկների հիմնադիր փաստաթղթերի, ինչպես նաև նրանց անվամբ և նրանց անունից գործարքներ կամ լիազորագրեր վավերացնելիս նրանց ներկայացուցիչների լիազորությունները հավաստող փաստաթղթերը կամ դրանց պատճենները կամ քաղվածքները.

2) գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը՝

ա. դրանց ամբողջությամբ օտարման վերաբերյալ գործարքները վավերացնելու դեպքում, բացառությամբ Քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածով սահմանված կարգով գույքի իրացման, հարկադիր կատարման փուլում գտնվող գույքի վաճառքի և օրենքով սահմանված այլ դեպքերի, երբ սեփականատեր չհանդիսացող երրորդ անձն իրավասու է վաճառել, բայց հնարավորություն չունի ստանալ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթուղթը: Այս դեպքում նոտարին կարող է ներկայացվել և նրա մոտ պահպանվել անշարժ գույքի կադաստրի վարչության կողմից տրված սեփականության վկայականի պատճենը և միասնական տեղեկանքը.

բ. երբ սեփականատերն ամբողջությամբ չի օտարում իրեն պատկանող գույքը, կամ, երբ սեփականատերերը գույքի սեփականության վերաբերյալ ունեն մեկ ընդհանուր փաստաթուղթ, և նրանցից մեկն է օտարում իրեն պատկանող բաժինը (կամ բաժնի մասը).

3) գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները՝ դրանց վերաբերյալ այլ գործարքներ վավերացնելու դեպքում.

4) գույքի նկատմամբ սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթի պատճենը՝ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում չենթադրող այլ պայմանագրեր վավերացնելիս.

5) վարձակալության իրավունքը հաստատող փաստաթղթերի պատճենները՝ ենթավարձակալության պայմանագրեր վավերացնելիս.

6) տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականների բնօրինակը՝ դրանց օտարման գործարքները վավերացնելիս կամ ժառանգության իրավունքի վկայագրեր տալիս:

7) տրանսպորտային միջոցների սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականների պատճենները՝ տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցում չենթադրող այլ պայմանագրերի վավերացման դեպքում:

8) նոտարական գործարքի առանձնահատկություններից ելնելով՝ նաև այլ փաստաթղթերի պատճենները:

37. Այն փաստաթղթերը, որոնց հիման վրա կատարվել են նոտարական գործողությունները, ինչպես նաև սույն կարգի համաձայն նոտարի մոտ պահվող փաստաթղթերը (դրանց պատճենները) կցվում են գործարքի, ժառանգության իրավունքի վկայագրի և մյուս հիմքերի՝ նոտարի մոտ մնացող օրինակին (այսուհետև՝ նոտարական գործ):

38. Նոտարական գործում փաստաթղթերը կարող են կարվել հետևյալ հաջորդականությամբ՝

1) դիմողի դիմումը (եթե նոտարական գործողությունն իրականացվել է գրավոր դիմումի համաձայն):

2) պայմանագիր կամ այլ գործարքը հաստատող այլ փաստաթուղթ կամ ժառանգության իրավունքի վկայագրի կամ նոտարական գործողության վերաբերյալ այլ փաստաթուղթ, որին կարվում է պետական տուրքի անդորրագիրը:

3) գործարքի վավերացման համար հիմք հանդիսացած գույքի նկատմամբ իրավունքի վերաբերյալ փաստաթղթի պատճենը կամ փաստաթուղթը:

4) լիազորագիր (լիազորագրի պատճենը):

5) համաձայնություններ, դիմումներ:

6) տեղեկանքներ:

7) այլ փաստաթղթեր:

39. Նոտարական գործում գտնվող փաստաթղթերը համարակալվում են: Նոտարական գործի սկզբում կարվում է շապիկ, որի վրա նշվում է՝

1) գործի համարը, որը պետք է համապատասխանի գրանցամատյանում կատարված գրառման համարին:

2) նոտարական գործողության տեսակը:

3) վավերացված գործարքի տեսակը, եթե գործը վերաբերվում է գործարքի վավերացմանը:

4) նոտարական գործողության կատարման օրը, ամիսը և ամսաթիվը:

40. Նոտարական գործն ամբողջությամբ կազմվում և կարվում է այնպես, որ այն չփչացնի փաստաթղթի տեքստը և այն ընթեռնելի լինի առանց քանդելու: Նոտարական գործը կարվում է թելով, ժապավենով կամ կարիչով: Թելի, ժապավենի կամ կարիչի ծայրերը դուրս են բերվում նոտարական գործի վերջին էջի հետնամասում: Թելը կամ ժապավենը հանգուցվում են: Այդ հանգուցի կամ կարիչի ծայրերի վրա սոսնձվում է սպիտակ ամուր թուղթ այնպես, որ թելի կամ ժապավենի մի մասը դուրս մնա թղթի տակից: Սոսնձման համար կիրառվում է այնպիսի սոսինձ, որը հնարավորություն չտա պոկելու թուղթը կամ քանդելու թելը, ժապավենը կամ կարիչը՝ առանց վնասելու նոտարական գործը, նրա վերջին էջը, թելը կամ ժապավենը: Սոսնձվող թղթի վրա նշվում են հետևյալ բառերը՝ «Նոտարական գործը համարակալված է և բաղկացած ... թերթից»: Սոսնձվող թուղթը ստորագրում է նոտարը՝ դնելով պետական զինանշանի պատկերով կլոր կնիք այնպես, որ կնիքի կեսը դրոշմվի սոսնձված թղթի, իսկ մյուս կեսը՝ նոտարական գործի վերջին էջի վրա: Նոտարական գործը կարվում է համապատասխան նոտարական գործողությունն ավարտելուց հետո՝ 10 օրվա ընթացքում:

41. Յուրաքանչյուր վավերացված գործարքի կամ այլ փաստաթղթի կամ կատարված նոտարական այլ գործողության համար կազմվում է մեկ նոտարական

գործ: Մեկ նոտարական գործը ներառում է նաև այն գործարքները և նոտարական գործողությունները, որոնք հանդիսանում են մեկը մյուսի բաղկացուցիչ մասը, փոխկապակցված են, մեկը մյուսին լրացնող են կամ բխում են մեկը մյուսից:

42. Միննույն անձի կողմից կնքված տարբեր գործարքները կամ կատարված այլ նոտարական գործողությունները չեն կարող միացվել մեկ նոտարական գործում, բացառությամբ սույն բաժնով նախատեսված դեպքերի:

43. Նոտարական գործից փաստաթղթեր հանելն արգելվում է, բացառությամբ՝

1) օրենսդրությամբ սահմանված կարգով գործարքը կամ նոտարական գործողությունն անվավեր ճանաչվելու կամ գործարքը վաղակետ լուծվելու դեպքի, եթե այդ կապակցությամբ կողմերին վերադարձվելու են նրանց կողմից ներկայացված փաստաթղթերի բնօրինակները: Այս դեպքում նոտարական գործում կարվում է վերադարձվող փաստաթղթի պատճենը, ինչպես նաև գործարքը կամ նոտարական գործողությունն անվավեր ճանաչելու կամ գործարքը լուծվելու մասին փաստաթուղթը կամ դրա պատճենը:

2) նոտարական գործում գտնվող փաստաթուղթը սահմանված կարգով փորձաքննության ուղարկելու դեպքում, եթե դրա փորձաքննությունն անհնար է կատարել առանց փաստաթուղթն առանձնացնելու: Փաստաթղթի փորձաքննության ավարտից հետո այն պետք է կարվի նոտարական գործում:

44. Նոտարական գործից փաստաթուղթ հանելու կամ այն պատճենով փոխելու վերաբերյալ նոտարի կողմից կատարվում է գրառում նոտարական գործի կազմի վերջին էջի վրա կամ առանձին թղթի վրա, որը նույնպես կարվում է նոտարական գործի վերջում:

45. Նոտարի կողմից վավերացված կամ տրված փաստաթղթի կորստյան դեպքում տրվում է կորած փաստաթղթի կրկնակը (կրկնօրինակը) այն քաղաքացու, կազմակերպության կամ հիմնարկի գրավոր դիմումի հիման վրա, որոնց հանձնարարությամբ կամ որոնց նկատմամբ կատարվել են նոտարական գործողությունները: Նոտարը տալիս է նաև Քաղաքացիական օրենսգրքի 1216-րդ հոդվածում թվարկված պաշտոնատար անձանցից ի պահ ստացված կտակների կրկնօրինակները: Փաստաթղթի կրկնօրինակը պետք է բովանդակի վավերացված կամ տրված փաստաթղթի ամբողջ տեքստը: Փաստաթղթի կրկնօրինակի վրա արվում է սահմանված ձևի վավերացման մակագրություն: Կտակի կրկնօրինակը կարող է կտակում նշված ժառանգներին տրվել նրանց կողմից կտակարարի մահվան վկայականը ներկայացնելուց հետո: Կտակում նշված ժառանգների մահվան դեպքում կտակի կրկնօրինակը կարող է նրանց ժառանգներին տրվել կտակարարի և մահացած ժառանգի մահվան վկայականները նրանց կողմից ներկայացվելուց հետո:

6. ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ՆՈՏԱՐԻ ՄՈՏ ԵՎ ՆՐԱՆՑ ՆԱԽԱՊԱՏՏՐԱՍՏՈՒՄԸ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՎՈՒՄ ՊԱՀԵԼՈՒ ՀԱՄԱՐ

46. Նոտարական փաստաթղթերը (վկայագրեր, պայմանագրեր, լիազորագրեր և այլն), այն փաստաթղթերը, որոնց հիման վրա կատարվել են դրանք, ինչպես նաև գրանցամատյաններն ու հաշվառման մատյանները, նախքան պետական արխիվ հանձնելը, պահվում են նոտարի մոտ օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում:

47. Գրանցամատյանները և վարույթով ավարտված ժառանգական գործերը, ընթացիկ գործավարության կարգագրերը, նախքան արխիվ կամ ոչնչացման հանձնելը, պետք է պահպանվեն նոտարի մոտ:

48. Տարին վերջանալուց հետո նոտարի կողմից կատարվում է գործերի նախապատրաստում արխիվային պահպանության հանձնելու, որի համար ճշտվում է փաստաթղթերի համակարգումը գործերում (անհրաժեշտության դեպքում գործերը վերաձևավորվում են), կատարվում է գործերի ձևավորում, մշտապես և երկար

Ա Վ Տ
Թվականը ինդեքսը

(կազմելու տեղը)

Ոչնչացման ենթակա փաստաթղթերի և գործերի առանձնացման մասին հիմքը՝
..... թվականը թիվ որոշումը կազմվել է հանձնաժողովի կողմից

Հանձնաժողովի նախագահ՝ _____
(պաշտոնը, ազգանունը, անվան, հայրանվան սկզբնատառերը)

Հանձնաժողովի անդամներ՝ _____
(պաշտոնները, ազգանունները, անվան, հայրանվան սկզբնատառերը)

Հանձնաժողովը՝ ղեկավարվելով _____ ցանկով,
(ցանկի անվանումը)

Որպես գիտապատմական արժեք չունեցող և իրենց գործնական նշանակությունը կորցրած, ոչնչացման վերցրեց հետևյալ փաստաթղթերն ու գործերը.

(Այն նոտարի անունը և ազգանունը, որի գործունեության ընթացքում ստեղծվել են այնպիսի փաստաթղթեր, որոնք ենթակա չեն հետագա պահման)

	Փաստաթղթերի և գործերի տարբերվերը	Փաստաթղթերի և գործերի վերնագիրը, գործերի համարները	Պարզաբանումներ	Փաստաթղթերի և գործերի (հատորների) քանակը	Հոդվածների համարները ըստ ցանկի
1	2	3	4	5	6

Ընդամենը գործեր _____
(թվանշաններով և բառերով)

Հանձնաժողովի նախագահ _____
(ազգանունը և անվան, հայրանվան սկզբնատառերը)

Ստորագրություն

Հանձնաժողովի անդամներ՝ ստորագրություններ _____
(ազգանունները և անվան, հայրանվան սկզբնատառերը)

Փաստաթղթերը ոչնչացվել են

Հանձնաժողովի նախագահ
ստորագրություն _____

Թվական

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«13» սեպտեմբերի 2019թ.

N 246-Ա

ք.Ստեփանակերտ

**«ԼԻ-ՖԱՐՄԱ» ՄԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» օրենքի 8-րդ հոդվածի և 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 3-րդ բաժնի 2-րդ կետի պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ

1. «ԼԻ-ՖԱՐՄԱ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (հասցե՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ, Ազատամարտիկների 22/26) հայտը բավարարել և տալ դեղատնային գործունեություն (դեղատնային կրպակ) իրականացնելու համար լիցենզիա:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել տրված լիցենզիայի մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Ա.ԲԱՂՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

ՀՐԱՄԱՆ

«4» հոկտեմբերի 2019թ.

N 270-Ա

ք.Ստեփանակերտ

**ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆՆԱ ԲԱԲՈՒՐՅԱՆԻՆ ԴԵՂԱՏՆԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՈՒԺԸ
ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և անհատ ձեռնարկատեր Աննա Բաբուրյանի դիմումը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ`

1.Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից 2013 թվականի օգոստոսի 27-ին դեղատնային գործունեության համար անհատ ձեռնարկատեր Աննա Բաբուրյանին տրված թիվ Ա-XX-000234 լիցենզիան:

2.Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին`

1) ապահովել լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) անհատ ձեռնարկատեր Աննա Բաբուրյանի լիցենզիայի բնօրինակը կցել նրա անհատական գործին.

3) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Ա.ԲԱՂՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«23» սեպտեմբերի 2019թ.

N 230-Ն

ք.Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N 10-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2011 թվականի փետրվարի 24-ի «Սելեկցիոն նվաճումների փորձաքննության և տնտեսական օգտակարության փորձարկումների գնահատման փորձագիտական խորհուրդ ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին» N 10-Ն հրամանի թիվ 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Ժիրայր Միրզոյան

Հավելված
Արցախի Հանրապետության գյուղատնտեսության
նախարարի 2019 թվականի սեպտեմբերի 23-ի
N 230-Ն հրամանի

«Հավելված թիվ 1
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2011 թվականի փետրվարի 24-ի
N 10-Ն հրամանի

Կ Ա Ջ Մ

**ՍԵԼԵԿՑԻՈՆ ԵՎ ԱՃՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

Վ. Ավետիսյան	Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ (խորհրդի նախագահ)
Ա. Բադալյան	Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության պետ (խորհրդի նախագահի տեղակալ)
Եվ. Հակոբյան	Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (խորհրդի անդամ)
Մ. Ավանեսյան	Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության գլխավոր մասնագետ (խորհրդի անդամ)
Կ. Ադամյան	«Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն (խորհրդի անդամ)
Ն. Մելքումյան	«Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր սերմնաբույծ (խորհրդի անդամ)
Կ. Հովհաննիսյան	Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության բաժնի վարիչ (ըստ անհրաժեշտության)
Ա. Գուլյան	Շուշիի տեխնոլոգիական համալսարանի դասախոս, կենսաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (ըստ անհրաժեշտության)
Գ. Մահակյան	Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության վարչության գլխավոր մասնագետ (խորհրդի քարտուղար):»:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

«30» սեպտեմբերի 2019թ.

N 187

Հ Ր Ա Մ Ա Ն

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ ԱՎՏՈՍՈՒԲԻԼՈՎ
ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ
ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության տեսակի լիցենզավորող հանձնաժողովի 2019 թվականի սեպտեմբերի 27-ի N340-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Դադարեցնել՝

1.անհատ ձեռնարկատեր՝ Հենրիխ Ջիվանջիրիի Մնացականյանի Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՈՆ00081 լիցենզիայի և N00001 ներդիրի գործողությունները.

2. անհատ ձեռնարկատեր՝ Կամո Կառլենի Աղաջանյանի Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՈՆ00156 լիցենզիայի և N00001 ներդիրի գործողությունները.

3.անհատ ձեռնարկատեր՝ Ռոբերտ Արարատի խաչատրյանի Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՈՆ00505 լիցենզիայի և N00001 ներդիրի գործողությունները.

4. անհատ ձեռնարկատեր՝ Նվեր Բորիկի Հաթամյանի Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՈՆ00538 լիցենզիայի և N00001 ներդիրի գործողությունները.

5.անհատ ձեռնարկատեր՝ Գեղամ Վլադիմիրի Ղուկասյանի Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՈՆ00645 լիցենզիայի և N00001 ներդիրի գործողությունները.

6. ֆիզիկական անձ՝ Գագիկ Վալերիի Պետրոսյանի Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափո-

խաղրումների կազմակերպման ՏՃN00664 լիցենզիայի և N00001 ներդիրի գործողությունները.

7.«ՄՄԱՌԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Արցախի Հանրապետությունում մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխաղրումների կազմակերպման ՏՃN00669 լիցենզիայի և N00001, N00002, N00003, N00004, N00005 ներդիրների գործողությունները.

8.անհատ ձեռնարկատեր՝ Ռոբերտ Միքայելի Բաղդասարյանի Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխաղրումների կազմակերպման ՏՃN00693 լիցենզիայի և N00002 ներդիրի գործողությունները.

9. ֆիզիկական անձ՝ Գեղամ Հենրիկի Մնացականյանի Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխաղրումների կազմակերպման ՏՃN000707 լիցենզիայի և N00001 ներդիրի գործողությունները:

2. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿԱՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

08 հոկտեմբերի 2019թ.

N 195

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՄԱՐԴԱՏԱՐ-ՏԱՔՍԻ ԱՎՏՈՄՈԲԻԼՆԵՐՈՎ
ՆԵՐՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱՐԴՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՈՄԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԻԱ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐ
ՏՐԱՍՏԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՆԵՐԴԻՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ, 37-րդ, 40-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության տեսակի լիցենզավորող հանձնաժողովի 2019 թվականի հոկտեմբերի 3-ի N 341-ՏՆ եզրակացությունը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Տրամադրել՝

1) **ֆիզիկական անձ Անուշավան Կառլենի Ազիզյանին՝** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության իրականացման ՏՈՆ00642 լիցենզիայի N00002 ներդիր.

2) **անհատ ձեռնարկատեր Նելսոն Վազգենի Ստեփանյանին՝** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության իրականացման ՏՈՆ00728 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր.

3) **անհատ ձեռնարկատեր Աշոտ Ռուդոլֆի Աղաբեկյանին՝** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության իրականացման ՏՈՆ00729 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր.

4) **անհատ ձեռնարկատեր Ռոբերտ Արարատի Խաչատրյանին՝** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման գործունեության իրականացման ՏՈՆ00730 լիցենզիա և լիցենզիայի N00001 ներդիր:

2. **Դադարեցնել ֆիզիկական անձ Անուշավան Կառլենի Ազիզյանին՝** Արցախի Հանրապետությունում մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ներհանրապետական ուղևորափոխադրումների կազմակերպման ՏՈՆ00642 լիցենզիայի N00001 ներդիրի գործողությունը:

3. Եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

2019 թվականի հոկտեմբերի 8-ի

**ՓՈՍՏԱՅԻՆ ՎՃԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՆՇԱՆԻ ՆՄՈՒՇՆԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԴՆԵԼՈՒ ՍԱՄԻՆ**

N 8-Ն

ՀՐԱՄԱՆ

Ղեկավարվելով «Փոստային կապի մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի երկրորդ մասի «դ» կետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Սահմանել փոստային վճարման պետական նշանի նմուշները՝
«Աշխարհահռչակ հայեր» շարքից «Շախմատի աշխարհի չեմպիոն Տիգրան
Պետրոսյանի ծննդյան 90-ամյակը» թեմայով չորս նամականիշ՝ համաձայն
NNNN 1,2,3 և 4 հավելվածների:

2. Գործողության մեջ դնել՝ «Աշխարհահռչակ հայեր» շարքից «Շախմատի
աշխարհի չեմպիոն Տիգրան Պետրոսյանի ծննդյան 90-ամյակը» թեմայով չորս
նամականիշ՝ սահմանելով յուրաքանչյուրի/ անվանագինը՝ 280-ական ՀՀ դրամ,
ընդհանուր տպաքանակը՝ 1500 հատ:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

«08» հոկտեմբերի 2019 թվական
ք.Ստեփանակերտ

Հավելված N 1
Արցախի Հանրապետության
Էկոնոմիկայի և արտադրական
ենթակառուցվածքների նախարարի
2019թ. հոկտեմբերի 8-ի N 8-Ն հրամանի



Հավելված N 2
Արցախի Հանրապետության
Էկոնոմիկայի և արտադրական
ենթակառուցվածքների նախարարի
2019թ. հոկտեմբերի 8-ի N 8-Ն հրամանի



Հավելված N 3
Արցախի Հանրապետության
Էկոնոմիկայի և արտադրական
ենթակառուցվածքների նախարարի
2019թ. հոկտեմբերի 8-ի N 8-Ն հրամանի



Հավելված N 4
Արցախի Հանրապետության
Էկոնոմիկայի և արտադրական
ենթակառուցվածքների նախարարի
2019թ. հոկտեմբերի 8-ի N 8-Ն հրամանի



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ
ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

2019 թվականի հոկտեմբերի 8-ի

**ԼԵՈՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՌՇՆԹԵՐ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի N 30Ն ՀՐԱՄԱՆ
ՈՒՇԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

N 9-Ն

ՀՐԱՄԱՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր արտադրական ենթակառուցվածքների վարչության պետի 2009 թվականի ապրիլի 29-ի «Ավտոբուսային երթուղիների սպասարկման ծառայությունների դիմաց վճարի հաշվարկման կարգը հաստատելու մասին» N 30Ն հրամանը:

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Լ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

«08» հոկտեմբերի 2019 թվական
ք.Ստեփանակերտ